

**ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ «ԱՐԵՎԵԼ-ՔԻ»¹ ՀԱՅԿԱԿԱՆ
ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԵՎ
ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ավետիս Հարությունյան, Արշակ Բայան

Հայկական բնաշխարհը, կամ Հայոց աշխարհը աշխարհագրական այն տարածքն է, պատմաաշխարհագրական այն միջավայրը, որի սահմաններում սկսած IV հազ. վերջերից և III հազարամյակի սկզբներից առաջացել, կազմավորվել և իր գոյությունն է հարատևել հայ ժողովուրդը, որտեղ նա ապրել է իրեն բաժին հասած պատմական կյանքը, բազմադարյան պատմությամբ կերտել իր քաղաքական, տնտեսական և մշակութային ինքնատիպ կենսագրությունն ու ստեղծել հայոց պետականությունը:

Հայկական բնաշխարհն ունի իր պատմական անվանումը, որը կոչվում է **Հայք, Հայոց աշխարհ, Հայոց տուն**, կամ **Հայաստան**²:

¹ Հինկտակարանյան տեղեկությունների համաձայն մարդկության Դրախտը գտնվել է Հայկական լեռնաշխարհի տարածքում, քանի որ Հայկական լեռնաշխարհից են սկիզբ առնում Աստվածաշնչյան նշանավոր գետերը՝ Եփրատը, Տիգրիսը, Գեհոնը (Արաքս) և Փիսոնը (ենթադրվում է Հալիսը կամ Ճորոխը): Տե՛ս **Ծննդոց**, Բ, 8-14: Ըստ Հին Կտակարանի, արարչագործության ժամանակ Հայր Աստվածը կավից ստեղծում է մարդուն և նրան բնակեցնում **Արեյքում**³ Երկրային դրախտում (իմա՝ Հայաստանում)։ «Եվ Եհովայ Աստված **արեյան** կողմը՝ Եդեմում դրախտ տնկեց և իր շինած մարդը այնտեղ բնակեցրեց: Տե՛ս **Ծննդոց**, Բ, 8-14: Միջագետքից ու հյուսիս տարածվող Հայկական լեռնաշխարհը համարվել է «արևելք» ոչ թե բառի աշխարհագրական կողմը ցույց տալու, այլ «**արևի ելքի երկիր**» իմաստով: Տե՛ս **Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա**, հ. 1, էջ 40-41: Ըստ Նորկտակարանյան տեղեկությունների Հիսուս Քրիստոսը երկինք համբարձվեց Երուսաղեմի **արևելյան** կողմից և խոստացավ երկրորդ գալստյան ժամանակ դարձյալ գալ **արևելքից**, որի համար էլ քրիստոնյաները սպասելով փրկչին դեպի **արևելք** են երկրպագություն անում: Տե՛ս **Եզեկիել** 43.2, **Չաքարիա** 14.4, նաև **Սաղմոսաց Գիրք** 49.1:

² «**Հայաստան**» անվանումը՝ որպես միջին դարերի արգասիք, օգտագործվել է «**Հայք**» անվանը զուգահեռաբար և պատմաաշխարհագրական տեսակետից ունեցել է նույն նշանակությունը: Այն ցույց է տալիս ինչպես էթնիկական պատկանելություն, այնպես էլ պետականություն և ֆիզիկա-աշխարհագրական տարածաշրջան: Կարելի է ենթադրել,

Օտարներն այն անվանել են՝ «Արևելք», «Արարատի երկիր», «Թորգոմյան տուն» (Աստվածաշնչի եբրայերեն և լատիներեն տեքստերում), «Կարդու» (Աստվածաշնչի ասուրերեն և քաղդեերեն բնագրերում), «Արմենիա» (Աստվածաշնչի հունարեն թարգմանությունում), «Հաբեթյան աշխարհ», (եբրայերեն), «Նահարին» (եգիպտերեն), «Հայասա» (խեթերեն) «Նահիրի», «Արամյան տուն», «Արամյան ազգ», «Ուրաշտու, (բաբելերեն) Ուրարտու (ասուրերեն), «Արմենիկ», ««Արմինա» - Արմենիա-Արմանիա-Արմնիա» (պարսկերեն), «Խար(Հար) Մինայապ», «Հար-Մինի» (ելամերեն), Հարմոնիա¹, Սոմխեթիա (որ նշանակում է հարավային խեթեր՝ վրացերեն), Սոմիխիսթոն (օսերեն), Էրմալոյչով (չեչեներեն), Էրմելիե (չերքեզերեն), Ցիամուխ (ավարերեն), «Էրմենիա» (արաբերեն), «Էրմենիստան» (թուրքերեն), «Իլեստան» (աշխատող ժողովուրդ՝ քրդերեն), Այարման/Շեամախտիլա (արբիսազերեն), «Յամենիա» (չինարեն), «Վիրմենիա» (ուկրահներեն) և այլ ձևերով:

Հայկական բնաշխարհն ունի նաև իր աշխարհագրական ձևակերպումը, որը հայտնի է Հայկական լեռնաշխարհ, կամ Հայկական լեռնաստան (հնագույն աղբյուրներում՝ Հայկական լեռներ, Արարատյան լեռներ) անունով: Հայկական լեռնաշխարհը գտնվում է Առաջավոր Ասիայի² հյուսիս-արևմտյան հատվածում, և կազմում է Ալայան-Հիմալայան

որ «Հայաստան» բառի «տան», կամ «տուն» բառամասը, կամ արմատն ունի ինչպես հին պարսկական (գենդական), այնպես էլ հայկական ծագում ու մեկնաբանություն և նշանակում է «երկիր», կամ «ապրելու վայր» (հմմտ. Բեհիստուն-Բիսիտուն, Անգեղտուն, Պարսպատունիք, Ուրարտու(ն), Թորգոմա Տուն և այլն): Մ. Խորնացին V դ. Հայաստան անվանումն օգտագործում էր ցույց տալով, որ այն Մեծ Հայքն է:

¹ Tracking Ladon God and the Hebrew Rose, Part one, Copyright tribwatch. com, 2006, p.80: Ավելի հանգամանորեն տե՛ս Մադոյեան Գ., Կարմոս, Հարմոնիա եւ Հայաստան, «Էջմիածին», 2018 թ., թիվ Դ, ապրիլ, էջ 46-61:

² Ասիա մայրցամաքի արևմտյան սարահարթը, որի տարածքն ըստ Էլիզե Ռեկյուի կազմում է 6,969525 կմ²: Տե՛ս Ռեկյու Է., Ռուսական Հայաստան կամ Արաքսի առաջանը, Ուրմիա լիճը եւ Առաջաոր Ասիա, Վաղարշապատ, 1891, էջ 126: Սահմանները հյուսիսում հասնում են Սև ծով, Մեծ Կովկասյան լեռներ, Կասպից ծով և Թուրանական տափաստաններ, հարավում՝ Հնդկական օվկիանոս, արևելքում՝ Հինդու-Քուշ, իսկ արևմուտքում՝ Կարմիր, Միջերկրական և Էգեյան ծովեր: Անատոլիա-Իրանական ենթամայրցամաքն ունի մինչև 5000 կմ երկարություն և 500 կմ լայնություն: Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 13, Երևան, 1987, էջ 29: Այն բաղկացած է գեոմորֆոլոգիական 6 շրջաններից՝ Փոքրասիական, Հայկական, Իրանական, Աֆղանական,

գեոսինկլինալային գոտու օղակներից ու Արևմտյան Ասիայի երեք (Իրանական, Հայկական և Անատոլիական) խոշոր բարձրավանդակներից մեկը: Այն տեղակայված է արևելքում՝ Իրանական¹ և արևմուտքում՝ Փոքրասիական (Անատոլիական)² լեռնաշխարհ-սարահարթերի միջև Առաջավոր Ասիայի երկու՝ իրանական և դինարո-տավրոսյան լեռնահամակարգերի հանգույցում (Schaarung)³ և միավորում է Արևելքն Արևմուտքի հետ⁴: Հ. Առաքելյանը նկատում է, որ Ասիայի սարահարթերից ամենապտղաբերը և մշակության համար պիտանին Հայկական լեռնաշխարհն է, որովհետև մյուսների նման այն չունի ավազոտ անապատներ և քարոտ երկրներ⁵:

Երկրաբանական վաղ անցյալում մեր մոլորակի վրա գոյություն են ունեցել երկու խոշոր մայրցամաքներ՝ Լավրասիան և Գոնդվանան, որոնց միջև ձգվել է Թետիս օվկիանոսը:

Պակիստանյան և Կովկասյան: Տե՛ս **Л. Н. Зограбян**, Орография Армянского нагорья (опыт орографического анализа морфоструктуры), Ер., 1979, с.8: Ըստ աշխարհի ֆիզիկա-աշխարհագրական ատլասի առաջավորասիական բարձրավանդակը բաղկացած է Հայկական և Իրանական բարձրավանդակներից, Անատոլիական սարահարթից, Ղրիմ-Կովկասյան տարածաշրջանից, Պակիստանյան՝ Հնդ-Գանգեսյան ցածրավայրից: Տե՛ս, Физико-географический атлас мира, Москва, 1964, с. 16:

¹ Իրանական բարձրավանդակն ունի 2,7 մլն կմ² տարածք և 2500 կմ ձգվածություն: Այն գտնվում է Թուրանի և Հարավ-Կասպիական դաշտավայրերի, Ինդոս գետի, Պամիրի, Հերմսիրի անապատի, Միջագետքի ու Հայկական բարձրավանդակի միջև: Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ.4, Երևան, 1978, էջ 452, նաև Физическая география материков и океанов, Н. В. Александровская, Зарубежная Азия, Москва, 1962, с. 104-120.

² Փոքրասիական (Անատոլիական) բարձրավանդակն ունի 380 հազ. կմ² տարածք: Այն ողողվում է Սև, Մարմարա, Էգեյան, Միջերկրական ծովերի և Բոսֆորի ու Դարդանելի նեղուցների ջրերով: Արևելքից արևմուտք այն ձգվում է 1000 կմ երկարությամբ, իսկ հյուսիսից հարավ՝ 400-600 կմ լայնությամբ: Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 12, Երևան, 1986 թ., էջ 370, նաև Физическая география материков и океанов, Н.В. Александровская, Зарубежная Азия, с. 93-101..

³ Տե՛ս **Гукасов Абр.**, Основные черты строения Армянского нагорья, с картой, Тифлиси, 1901, с.8.

⁴ Տե՛ս **Կ. Ավետիսյան**, Հայկական բարձրավանդակ և Արևելյան Հայաստան հասկացությունները և դրանց ոչ ճիշտ գործածումը մի շարք հեղինակների մոտ, «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1950, թիվ 7, էջ 90

⁵ Տե՛ս **Առաքելյան Հ.**, Հանրագիտական բառարան, բաղկացած երկու հատորից, հատոր I, Ա-Ն, Թիֆլիս-1915, էջ 1434

Հայկական լեռնաշխարհը **գրանիտային մի լեռնակուտակ է**, որն առաջացել է տասնյակ ու հարյուր միլիոնավոր տարիների ընթացքում՝ երկրակեղևի մագմայի շիթային շարժումների ազդեցությամբ Գոնդվանա մայրցամաքից պոկված ծագումով հնագույն Արաբա-Սիրիական կոշտի և Հնդկական թերակղզու բեկորի դեպի հյուսիս շարժվելու և Լավրասիա մայրցամաքի հետ բախվելու հետևանքով: Արաբա-Սիրիական կոշտը ճզմելով Թետիսի հատակում գտնվող Հայկական Տավրոսի գետսինկլինալը ծալքավորել է այն, մտել նրա տակ, որը հետագայում դուրս է մղվել, ստեղծելով մի բարձր լեռնակուտակ՝ Հայկական լեռնաշխարհը և Կովկասյան լեռները: Իսկ Հնդկական պլատֆորմն էլ ճզմել է Պամիրի,- Հիմալայների և Տիբեթի հատվածը և ստեղծել մեկ այլ լեռնային կղզի՝ Փոքրասիական և Իրանական սարահարթերում այդպիսի ճնշում չի եղել, քանի որ երկրակեղևն ավելի հանգիստ պայմաններում է ձևավորվել:

Քլեմանս Ռուայերի կարծիքով Հայաստանը նախապատմական ժամանակաշրջանում իրոք եղել է ջրի հատակ և 150 մլն.տարի առաջ կազմել է Թետիս օվկիանոսի մի մասը²: Այդ են վկայում աղի ջրերի (Վանա, Ուրմիա լճեր և այլն) գոյությունը և օվկիանոսային ձկների, խխունջների, մարջանների, կակղամորթների մնացորդները լեռնաշխարհի լեռնային բարձր շրջաններում³:

Հայկական լեռնաշխարհի ֆիզիկա-աշխարհագրական յուրահատուկ խիստ կտրտված երկրամասը սարավանդա-բարձրավանդակային ընդգծված բնույթ է ստացել երկրաբանական Կայնոզոյան դարաշրջանի երրորդական և չորրորդական ժամանակաշրջաններում: Թետիս օվկիանոսի ցամաքելու արդյունքում (7-11 մլն. տարի առաջ), երբ տեկտոնական իջվածքների հետևանքով առաջացել են Կողքիսը, Մերձկասպյան ցածրավայրը, Միջագետքը և ձևավորվել են Սև, Միջերկրական ու Կասպից ծովերը, վեր է բարձրացել Հայկական լեռնաշխարհը:

Հայկական լեռնաշխարհը համեմատաբար երիտասարդ գոյացում է: Այն իրենից ներկայացնում է լեռնագագաթներով բաժանված լավային

¹ Տե՛ս **Գաբրիելյան Հ. Կ.**, Հայկական լեռնաշխարհ, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2000, էջ 11-12:

² <https://bit.ly/3meTjJh>

³ Տե՛ս Bulletin de la Société d'Anthropologie de, Bruxelles, 1888-1889, p. 486:

սարահարթերի և տեկտոնական խորշերի մի ամբողջություն¹: Հրաբխային գործունեության հետևանքով, երկրի մակերևույթը թաղվել է հրահեղուկ լավայի ծածկույթի տակ, (որը լցրել է անհարթությունները և կլորացրել մակերևույթի գծագրությունը)² և ծածկվել է ալիքավոր սարավանդներով ու հրաբխային լեռնագագաթներով (Արարատ, Սավալան³, Սիփան, Արագած, Սրմանց)⁴: **Այն հրաբխային լավայի միջոցով առաջացած առաջավորասիական ամենամեծ բարձրավանդակն է⁵**: Մակերևույթի մեջ հսկայական փոփոխություններ են առաջացրել նաև արտաքին ուժերը՝ արևը, քամին, անձրևը և սառցադաշտերը:

Գիտության մեջ երկար ժամանակ տիրում էր այն կարծիքը, թե Հայկական լեռնաշխարհում, չնայած ընդարձակ սարահարթերի շատությանը, ոչ մի տեղ չեն պահպանվել չորրորդական դարաշրջանի սառցապատման հետքեր: Սակայն նորագույն հետազոտություններն ապացուցեցին, որ Հայկական լեռնաշխարհում պարզորոշ նշմարվում են սառցադաշտերի շարժման հետևանքները և մորենների (լեռնալանջերից սառույցների պոկած քարաշերտերի) գոյությունը (Գեղամա լեռնավահանի Գնդասար և Սպիտակասար գագաթների լանջերին, Արագածի ու Մասիսների վրա և այլն): Ժողովուրդը տակավին վաղ ժամանակներից Հայկական լեռնաշխարհի զանազան կողմերում նկատել է լեռնային ապարների վրա սառցադաշտերի տեղաշարժումից առաջացած խորագծեր և դրանք վերագրել է Տորք Անգեղ «հսկայի» եղունգների վարպետությանը:

Հայկական լեռնաշխարհը հրաբխային, լեռնակազմական և տեկտոնական ուժերի հետևանքով առաջացած երկիր է: Այն տարբեր ժամանակներում բյուրեղյա թերթաքարերից, մեզոզոյան կրաքարերից ձևավորված բեկորային և ծալքավոր բարձրաբերձ կոշտ լեռների, լեռնադաշտերի, կոնաձև ձյունածածկ լեռնագագաթների, ալպիական մարգագե-

¹ Տե՛ս **Бондарский М. С.** Словарь географических названий, Москва, 1954, с. 28:

² **Լիսիցեան Լ.**, Հայաստանը ֆիզիկական տեսակետով, Բանբեր Հայաստանի գիտական ինստիտուտի գիրք Ա եւ Բ, Երեւան, 1921-1922, էջ 236:

³ Սավալանը (Սաբալանը, Սալավանը, Սարավանը, Շահվարզանը, Հայկական լեռնաշխարհի երկրորդ բարձր գագաթն է՝ 4821 մ. բարձրությամբ:

⁴ Տե՛ս, **Бальян С. П.**, Структурная геоморфология Армянского нагорья и окаймляющих областей, Ереван, 1969, с.30, նաև Физико-географический атлас мира, Москва, 1964, с. 116:

⁵ <https://bit.ly/3meTjJh>

տինների, միջլեռնային բարեբեր և արգավանդ գոգահովիտների, հրաբխային մեծ ու փոքր սարահարթերի, անդնդախոր կիրճերի, տեկտոնական և լճային իջվածքների, լեռնային սառնորակ աղբյուրների, կապուտաչա լճերի, անտառածածկ լեռնալանջերի, կլիմայական հակադրությունների մի բարդ հանգույց է¹, ֆիզիկա-աշխարհագրական ու գեոմորֆոլոգիական մի ուրույն և ինքնատիպ շրջան: Այդ մասին ՀՀ պատվիրակության ղեկավար Ա Ահարոնյանը Փարիզի 1919 թ. խաղաղության վեհաժողովին ներկայացրած հուշագրում նշում է. «Լեռներով ցցուած եւ խորունկ հովիտներով կտրուած՝ այս երկիրը կը նմանի խառնափնթոր հանգույցի մը, որը բաղկացնող հողագրական զանազան մարզերը ըլլալով խիստ նման իրարու, կը ձեւացնեն միատարր եւ շատ լաւ բնորոշուած աշխարհագրական միութիւն մը»²:

Հայկական լեռնաշխարհի երկրակեղևի կտրվածքում առանձնանում են ա) նստվածքահրաբխային ծածկույթը (մինչև 8 կմ խորությամբ), բ) գրանիտային (15-20 կմ), գ) որձաքարային (իմա՝ բազալտային -Ա. Հ.) (15-20 կմ) և դ) վերածնված գերմաֆիտային (մանթայի կազմում 6-7 կմ) շերտերը³:

Մակերևույթի բնույթի շնորհիվ է, որ հին և միջնադարյան Հայաստանի գավառների մի զգալի մասի անունները բարդված են «ծոր», «փոր» և «հովիտ» բառերով (Աղիովիտ, Արգասովիտ, Արճիշահովիտ, Բալահովիտ, Առուենից ձոր, Ազնուաց ձոր, Բերձոր, Կողբովոր, Ծորփոր, Պարտիզացփոր և այլն)⁴:

Չնայած Հայկական լեռնաշխարհը շատ նմանություններ ունի Անատոլիական և Իրանական բարձրավանդակների հետ, սակայն այն նկարագրով տարբերվում և սահմանազատվում է ինչպես հարևան բարձրավանդակներից, այնպես էլ Անդրկովկասի և Միջագետքի հարթավայրերից⁵: Եթե այն սերտորեն միացած է իրենից արևելք և արևմուտք ընկած տարածաշրջանների հետ, ապա ընդհակառակը խիստ տարբերվում է

¹ Տե՛ս **Исаченко А. Г., Шляпников А.А.**, Ландшафты, Москва, 1989, с. 237:

² **Ահարոնեան Ա.**, Հայկական հարցը խաղաղութան ժողովին առջեւ, էջ 13:

³ Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 13, էջ 29:

⁴ Տե՛ս **Քաջունի Հ. Մ. վրդ.**, Աշխարհագրութիւն հին եւ նոր Հայաստանեայց դպրատանց տղայոց համար, Վենետիկ, 1857, էջ 8:

⁵ Տե՛ս **Վեհունի Ա.**, Հայկական լեռնաշխարհի երկրաբանությունը և ընդերքի հարստությունները, Երևան, 2001, էջ 9:

դեպի հյուսիս և հարավ ընկած երկրներից՝ Վրաստանից և Միջագետքից: Այդ առումով Հ. Լինչը նկատում է. «Եթե Հայաստանը բաժանված չէ բնական կարելուր պատվարներով արևելքից՝ Պարսկաստանից և արևմուտքից՝ Փոքր Ասիայից, ապա հյուսիսակողմը և հարավակողմը զատված է բնական պատվարներով»¹:

Ներկայացնելով մի անբաժան ամբողջություն, Հայկական լեռնաշխարհը հարևան երկրներից առանձնանում է բազմաթիվ երկրաբանական-գեոմորֆոլոգիական առանձնահատկություններով, որոնք անգլիացի նշանավոր երկրաբան Ֆելիքս Օսվալդի բնորոշմամբ մատնանշում են նրա բարձր աստիճանի անհատական բնույթը²: Առանձնահատկություններից տարբերակվում են հատկապես երեքը. ա) այն հարևան երկրներից ավելի բարձրադիր է, որով իրավամբ համարվում է առաջավորասիական ամենաբարձրադիր երկիրը, բ) հարուստ է հրաբխային լեռնաշղթաներով³, նրա մակերևույթի վրա առկա է հրաբխային գործունեության բավականին մեծ ազդեցություն, որի արդյունքում այն դարձել է հրաբխային լավայի միջոցով առաջացած Առաջավորասիական ամենամեծ բարձրավանդակը, գ) այն մի լեռնաշխարհ է, որի կենտրոնական մասն ավելի բարձր է, իսկ դեպի զանազան կողմեր գնալով ցածրանում է աստիճան առ աստիճան և իջնում սանդուխքաձև: Նրա մակերևույթը կորնթարդ է և վահանաձև, որի ինքնուրույն երկրաբանական բնույթը ժամանակին նկատել է գերմանացի նշանավոր ճանապարհորդ, երկրաբան **Ա. Հումբոլտը**⁴:

Հաշվի առնելով Հայկական լեռնաշխարհի այդ առանձնահատկությունները գերմանացի նշանավոր երկրաբան, Դորպատի համալսարանի 37-ամյա պրոֆեսոր, Կովկասի երկրաբանության հայր՝ **Հերման Աբիխն առաջին անգամ 1843 թ. իր՝ «Über die geologische natur des Armenische Hoshlandes» («Հայկական բարձրավանդակի երկրաբա-**

¹ Լինչ Հ. Ֆ. Պ., Հայաստան. ուղեորութիւններ եւ ուսումնասիրութիւններ, Կ.Պոլիս, 1913, էջ 400:

² Տե՛ս **Освальд Ф.Фр.**, Къ исторіи тектоническаго развитія Армянскаго нагорья, Записки Кавказскаго отдела императорскаго Русскаго географическаго общества, книжка XXIX, выпускъ 2-й, Тифлисъ, 1916, с. 1:

³ Տե՛ս **Աբեղեան Ա.**, Աշխարհագրութեան դասագիրք, չորրորդ գիրք, Հայաստան և հարեան երկրամասեր, Թիֆլիս, 1914, էջ 3:

⁴ Տե՛ս **Humboldt A.von**, Asie Centrale, tom I: Recherches sur les Chaines de Montagnes Et la Climatologie Comparee (Classic Reprint), Forgotten books, 2017, p. 118-127.

նական առանձնահատկությունների մասին») աշխատության մեջ Հայկական լեռնաշխարհն անվանել է «Armenische Plateau, Plateau Armenien, Armenian Plateau, Armenische Hochland»՝ «Հայկական բարձրավանդակ»¹, որը հոմանիշ է Հայկական լեռնաշխարհին²: Ինչու՞ հայկական, քանի որ հայերը վաղ ժամանակներից կազմում էին լեռնաշխարհի տեղաբնիկ հիմնական ազգաբնակչությունը: Ըստ էության «Հայկական»-ը Հ. Աբիխից առաջ էլ կար: Աշխարհահռչակ գիտնականն ընդամենն առանձնացրել է հայկական անունով տարածաշրջանի երկրաբանական առանձնահատկությունները:

Իսկ **Ռայմոն Ֆյուրոնը** Հայկական լեռնաշխարհը կոչել է «**Հայկական հովհարածև լեռնապար**»³:

Ինչպես երևում է մեր հայրենիքի աշխարհագրական բնութագրիչի մեջ հայկական բառն անխուսափելի է և դա պատահական չէ, քանի, որ «Հայկական բարձրավանդակ»-ը զուտ բնաաշխարհագրական ըմբռնում է, ինքնուրույն և ինքնատիպ մի միավոր, աշխարհագրական անբաժանելի մի ամբողջություն: Էթնիկական ու քաղաքական շարժունակ հատկանիշների ու չափանիշների փոխարեն երկրաբանական-գեոմորֆոլոգիական-աշխարհագրական եզրույթի առանձնացման հիմքում դրվել են կա-

¹ Ըստ Հրաչյա Գաբրիելյանի, եթե երկրագունդը դիտում ենք ամբողջականության մեջ, ապա իսկապես որ Հայաստան աշխարհը մի վանդակ է ներկայացնում: Բայց երբ երկիրը դիտարկում ենք միջին ու մեծ մասշտաբներով, ապա տեսնում ենք, որ այն բաղկացած է բազմաթիվ վանդակներից: Հետևաբար, Հայկական բարձրավանդակի եզակի թիվն իրեն չի արդարացնում, մանավանդ որ գոյություն ունի նաև Հայկական հրաբխային բարձրավանդակ հասկացությունը: Տե՛ս **Գաբրիելյան Հ.**, Հայք-Հայաստան- Հայկական լեռնաշխարհ, «Երեկոյան Երևան», 1989 թ. մարտի 13:

² Ավելի հանհամանորեն տե՛ս **Г. Абихь**, Геология Армянскаго нагорья, западная часть, орфографическое и геологическое описание “Записки кавказскаго отдела императорскаго русскаго Географическаго общества”, Пятигорскъ, 1899, книжка 21, восточная часть, 1902 книжка 23, **А. Гукасов**, “Основные черты строения Армянскаго нагорья “Записки кавказскаго отделения Русскаго Географическаго общества, 1901, книжка 22, выпускъ 1, **Освальд Ф. Фр.**, Къ исторіи тектоническаго развитія Армянскаго нагорья, “Записки кавказскаго отдела Русскаго Географическаго общества, 1916, книжка XXIX, выпускъ 2-й, **И. Щукин и А. Щукина**, Очерк Армянскаго нагорья, Москва, 1927.

³ **Бальян С. П.**, Структурная геоморфология Армянскаго нагорья и окаймляющих областей, с. 30.

յուն և հիմնավորված, ժամանակի ընթացքում փոփոխությունների չենթարկվող երկրակեղևի տվյալ հատվածի ֆիզիկաաշխարհագրական բնութագրիչները և մակերևույթի ծագումնաբանության երկրաբանական առանձնահատկությունները: Ինչպես Հ. Աբիխն է նշում այն ունի «երկրաբանական ինքնուրույն բնույթ»¹:

Ուշագրավն այն է, որ էթնիկական հատկանիշը համընկնում է ֆիզիկաաշխարհագրականին: Հայ ժողովուրդն առանձին շեղումներով առաջացել ու ձևավորվել է ֆիզիկաաշխարհագրական իմաստով հենց Հայկական բարձրավանդակի տարածքում: Այդ առիթով Ա. Ալպոյաճյանն նկատում է, որ Հայկական բարձրավանդակը «Ճանչցուած երկրին միջնաբերդը, առանձին կը ներկայացնէ միութիւն մը, որ ոչ մէկ ուրիշ երկրամասի կրնայ կցուիլ եւ աշխարհագրական Հայաստանն է, որ կայ եւ պիտի մնայ միշտ Հայերուն անունով»²: Ուրիշ հատկանիշներն ու չափանիշներն այստեղ իրենց չեն արդարացնում: Հետևաբար «Հայկական բարձրավանդակ (լեռնաշխարհ)» եզրույթը բացարձակապես գիտական է:

Հ. Աբիխի շնորհիվ շրջանառության մեջ դրված «Հայկական բարձրավանդակ» երկրաբանական, գեոմորֆոլոգիական և աշխարհագրական եզրույթը գործածական դարձավ գիտական աշխարհի կողմից: Ժամանակի անվանի աշխարհագրագետներն ու ճանապարհորդներն իրենց աշխատություններում հստակորեն օգտագործել և կիրառել են այդ հասկացությունը: Նույնը պետք է ասել նաև հանրագիտական բառարանների և աշխարհագրական ձեռնարկների հեղինակների մասին: «Հայկական բարձրավանդակ» («Հայկական լեռնաշխարհ») եզրույթը, որպես «Հայաստան»-ին հոմանիշ անվանում օգտագործվել է նաև Ջ. Բրայսի, Ա. Թոյնբրի և Ռ. Դե՛Նոզալեսի կողմից Հայոց ցեղասպանության դրվագները նկարագրելիս³:

¹ Ավելի հանգամանորեն տե՛ս Գ. **Абихъ**, Геология Армянского нагорья, западная часть, орографическое и геологическое описание «Записки кавказского отдела императорского русского Географического общества», Пятигорскъ, 1899, с. 1:

² **Ալպոյաճեան Ա.**, Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրէ, 1950, էջ 4:

³ «**Հայկական բարձրավանդակէն** 2000-3000 կիներ հոս (խոսքը՝ Հալեպի մասին է-Ա.Հ.) բերին քաջառողջ և միայն 40-50 կմախքներ մնացին»: Տե՛ս **Դերկոմս Պրայս Ճ.** Անգղիական կառավարութեան կապոյտ գիրքը հայկական Մեծ Եղեռնի մասին (1915-1916), Կ.Պոլիս, 1919, էջ 13, նաև **Де Ногалес Р.**, Четыре года под полумесяцем, Москва, 2006: Ռուս աշխարհագրագետ Ս.Ն.Մատվենի կարծիքով Արևելա-Անատոլիական բարձրավանդակ ասելով պետք է հասկանալ Հայկական լեռնաշխարհը: Տե՛ս **Матвеев**

Սակայն թուրքական պատմագիտական դպրոցի անմիջական ջանքերով ժամանակի ընթացքում շրջանառությունից մասամբ դուրս բերվեց «Հայկական լեռնաշխարհ» աշխարհագրական անվանումը և այն փոխարինվեց «Արևելյան Անատոլիա» («Դողու Անադոլու») շինծու և սխալ հորջորջմամբ¹, որն ամբողջությամբ յուրացվեց թուրք², ադրբեջանցի³ և արևմտյան⁴ հեղինակների կողմից և նույնիսկ շահարկման առարկա դարձավ խորհրդային որոշ մասնագետների (Ի. Մ. Դիյականով և ուրիշներ) աշխատություններում⁵: Այսպես, «The New Encyclopædia Britannica»-ում նշվում է, որ «Անատոլիա» անվանումն իրենից ներկայացնում է Թուրքիայի ներկայիս հանրապետության ասիական ամբողջ տարածքը, մտաւորապես լեռնային ուղղանկյուն մի երկիր, որը հազարավոր մղոններ երկարությամբ ձգվում է էգեյան ծովից մինչև Ռուսական Հայաստան և Իրանական Ադրբեջան⁶: Սրացվում է, որ Հայկական բարձրավանդակն արհեստականորեն դուրս է մղվում Անատոլիայի հաշվին:

Նշենք, որ «Անատոլիա»-ն հունարեն բառ է, որը նշանակում է «Արևելք»: Հույներն այդպես էին կոչում իրենցից արևելք ընկած փոքրասիա-

С. Н., Турция (Азиатская часть-Анатолия), физико-географическое описание, Москва, 1946, с. 172:

¹ **Uras Esat**, Tarihte Ermeniler ve Ermeni meselesi, Ankara, 1950, s. 11.

² Ըստ թուրք աշխարհագետ Բեսիմ Դարկոտի Արևելյան Անատոլիան գտնվում է Հյուսիս-Անատոլիական լեռների (իմա՝ Պոնտական- Ա.Հ.) և Հարավ-արևելյան Տավրոսի (իմա՝ Հայկական Տավրոս- Ա.Հ.) միջև: Տե՛ս **Даркот Б.**, География Турции, Москва, 1959, с. 25:

³ <https://bit.ly/2V8nTbH>

⁴ Տե՛ս **Փիլիպոսյան Ա.**, Մերձավոր Արևելքի հին քաղաքակրթությունները և Հայկական լեռնաշխարհը (մշակութաձագման և ազգաձագման հիմնախնդիրների շուրջ), քաղաքագիտության հարցեր 2009. հասարակություն, պատմություն, քաղաքակրթություն (միջբուհական գիտաժողովի նյութերը), Երևան, 2010, էջ 207-208: Այսպես, անգլիացի նշանավոր գիտնականներ, Լոնդոնի համալսարանի պրոֆեսորներ Դեյվիդ Մ. Լանգը և Քրիստոֆեր Ջ. Ուոքլըն իրենց «Հայերը» աշխատության մեջ նշում են. «Հայոց երկիրը...զբաղեցնում է մի ընդարձակ լեռնային տարածք՝ իր մեջ ներառելով **Արևելյան Անատոլիայի** (ընդգծումը մերն է -Ա.Հ.) մեծ մասը: Տե՛ս **Լանգ Դ. Մ., Ուոքլը Բ. Ու.**, Հայերը, Երևան, 1992, էջ 11:

⁵ **Дьяконов И. М.**, Пути и судьбы, «Знания-сила», Москва, 1988г., N 9, с. 27:

⁶ The New Encyclopædia Britannica in 30 volumes, volume I, Chicago/London/ Toronto/Geneva/Sydney/Tokyo/Manila/Seoul, 1979, p. 813.

կան երկրամասը՝ մինչև համանուն թերակղզու աշխարհագրական վերջավորությունը: Այսինքն՝ «Անապոլիա» եզրույթը պատմաաշխարհագրական տեսանկյունից համապատասխանում է միայն և միայն Փոքր Ասիա թերակղզուն: Եվ քանի որ Փոքր Ասիան գտնվում է Հայկական լեռնաշխարհից արևմուտք, ուստի «Անապոլիա» անվան վարչաքաղաքական և քարտեզագրական կիրառումը չի կարող տեղավորվել Փոքր Ասիայի սահմաններից դուրս¹:

Այդ առիթով ռուս հետազոտող Իվան Ռաբցիգերը նշում է. «Ներկայումս թուրքական և ադրբեջանական պատմաբանները խուսափում են ոչ միայն օգտագործել այդ տեղանունը (խոսքը՝ «Հայկական բարձրավանդակ» (լեռնաշխարհ) եզրույթի մասին է - Ա. Հ.) այլև՝ նույնիսկ հիշատակել դրա գոյության մասին: Ընթացք տրվեց իր անհեթեթությամբ ինչ-որ մի ֆանտաստիկ «արևելյան Անապոլիա» հասկացությանը, ինչը, հասկանալի է, թուրքական հայտնագործություն է»: Եվ քանի որ «Անապոլիա» նշանակում է «արևելք», ըստ հեղինակի «հնարովի «արևելյան Անապոլիա»-ն կարելի է թարգմանել «արևելյան Արևելաստան» («восточная Востокия»)… մնում է ենթադրել, որ գոյություն ունեն «հարավային Արևելաստան», «հյուսիսային Արևելաստան», և ո՞վ գիտի «արևմտյան Արևելաստան»: Հետաքրքիր է, ինչպիսի՞ն կլինի թուրք հետազոտողների արձագանքը, եթե նրանց երկիրը, ... առաջարկեն անվանել «Քառա-Արևելաստան» («Четверо-Востокие») կամ «Եռա-Արևելաստան» («Трета-Востокие»), կամ ուղղակի՝ «Արևելաստան» («Востокие»)²:

Հակագիտական է նաև այն «մոտեցումը», երբ Հայկական բարձրավանդակն անվանում են, **Արևելյան կամ Հայաստանի Յայլաներ** («Շարք Յայլարի», *Ermənistən yaylası*)³, **Հայ-քրդական բարձրավանդակ**, իսկ 1847 թ. ստեղծված «Քրդստանի էյալետ» (թրք.՝ *Eyâlet-i Kürdistan*) վարչամիավորն էլ դիտարկվում է որպես Հայկական լեռնաշխարհից կտրված աշխարհագրական առանձին միավոր:

¹ Տե՛ս **Դանիելյան Է. Լ.**, Հայաստանն ու հայկական տեղանունները. Հայոց բնապատմական միջավայրի պաշտպանության գիտական առաջադրանքը, «ՎԷՄ», 2009 թ., թիվ 1(26), էջ 14:

² **Ратцигер И.** «Трета-Востокия», ложь и правда об армянском Геноциде (<https://bit.ly/33mVPG4>) էջ 28:

³ Азербайджанская советская энциклопедия, том IV. стр. 82.

Ինչու՞, որովհետև ա) Հայկական լեռնաշխարհը բարձրավանդակ է, իսկ Անատոլիան՝ Փոքր Ասիա թերակղզին սարահարթ, բ) Փոքր Ասիան որպես թերակղզի հասնում է մինչև Կիլիկյան և Հայկական Տավրոսի լեռներ և այնտեղից ձգվում դեպի հյուսիս-արևելք, դեպի Սև ծով: Հեղևաբար, Փոքր Ասիայից դեպի արևելք ընկած փարածքն արդեն Փոքր Ասիա չէ, դուրս է թերակղզուց: Իսկ Հայկական լեռնաշխարհը երբեք թերակղզու մեջ չի եղել: Հակառակ տրամաբանությամբ եթե առաջնորդվենք Արևելյան Անատոլիա կարող ենք համարել ոչ միայն Հայկական լեռնաշխարհը, նաև Ասորիքը, Միջագետքը, Իրանական բարձրավանդակը և այն ամենը ինչ ընկած է արևելքում: գ) Հայկական լեռնաշխարհը, որի փարածքը կազմում է 400000 կմ², մի փոքր ավելի մեծ է, քան Փոքր Ասիա թերակղզին, որի փարածքը կազմում է 380000 կմ²: Ինչպես կարող է մեծը փոքրի մաս կազմել:

Ճիշտ է նկատում աշխարհագետ Էվալդ Բանզենը, երբ նշում է, որ «աշխարհագրական առանձին բնությամբ մի Քուրդիստան գոյություն չունի»¹: Այսինքն, ըստ էության, ոչ միայն այսր, այլև՝ անդրդրիստան լեռնաշխարհը ևս մտնում է Հայկական բարձրավանդակի կազմի մեջ: Իսկ ըստ Վ. Սիվերսի Հայկական լեռնաշխարհի մեջ են մտնում նույնիսկ Թավրիզը, Տրապիզոնը, Բաթումը, Աստրախան և Լենքորանը²:

Անընդունելի են նաև Անդրկովկաս-Այսրկովկաս³ Կովկասյան Հայաս-

¹ Հայոց հայրենիքը, ա.տ. և թ., էջ 9:

² Տե՛ս **Сиверс В.**, Всемирная география (Азия). Графическое, геологическое описание СПб, с. 171

³ Անդրկովկաս-Այսրկովկաս եզրույթը, որն առաջացել է XVIII դ., խորհրդային տարիներին հասկացվում էր որպես Կովկասյան պարանոցի մի մասը Կովկասյան գլխավոր ջրբաժանից մինչև ԽՍՀՄ պետական սահմանը Թուրքիայի և Իրանի հետ՝ 186,1 հազ կմ² տարածքով: Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, Երևան, 1974, էջ 396: Ըստ Ստ. Լիսիցյանի Անդրկովկասի տարածքը կազմել է 185,128 կմ²: Տե՛ս **Լիսիցյան Ստ.**, ՀԽՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, դեմոգրաֆիայով, Երևան, 1940, էջ 8: Իրականում Հայկական լեռնաշխարհի այն մասը, որ գտնվում էր ԽՍՀՄ-ում պայմանականորեն կոչվում էր Անդրկովկասյան բարձրավանդակ և զբաղեցնում էր ՀԽՍՀ-ի տարածքը, Վրացական ԽՍՀ-ի հարավային և Ադրբեջանական ԽՍՀ-ի արևմտյան շրջանները: Տե՛ս Большая советская энциклопедия, т. 2, третье издание, Москва, 1970, с. 249, т. 2, четвертое издание, Москва, 2005, նաև Տե՛ս Большая Российская энциклопедия, т. 2, Москва, 2005, с. 261., նաև <https://bit.ly/2jmjYoR>.

տան, Հարավային Կովկաս¹, Ջավախք-Հայկական լեռնաշխարհ² ձևակերպումները:

Ողջ Հայկական բարձրավանդակի տարածքը կազմում է շուրջ 400.000 քառ.կմ³: Այն Ավստրալիայից փոքր է 36, Եվրոպայից՝ 40, Աֆրիկայից՝ 128,8, Ամերիկայից՝ 171, Ասիայից՝ 175 անգամ, իսկ Բելգիայից մեծ է 8 անգամ⁴:

Այն գտնվում է Գրինվիչի աստղադիտարանի վրայով անցնող սկզբնական միջօրեականից արևելք՝ արևելյան երկայնության 37°20'-49°-ի (Ֆերոյից հաշված 55 և 67°-ի միջև) և հյուսիսային լայնության՝ 36,4'-42°,08'-ի միջև: Հայկական բարձրավանդակի երկարությունն արևելքից արևմուտք 12° է, կամ ինչպես Ղ. Ալիշանն է նշում «ըստ արարարեանն Մասեաց երկայնութեան 6° ընդ արևմուտս և 6° ընդ արևելս»⁵, իսկ լայնությունը հյուսիսից հարավ՝ 6°:

Որևէ բարձրավանդակի բնական սահմանները ամենահատուկ կերպով որոշում են լեռնաշղթաները և գետերը: Սակայն, եթե հյուսիսային և հարավային սահմանների վերաբերյալ տարակարծություններ գրեթե չկան, խիստ վիճահարույց է արևմտյան և արևելյան սահմանների հարցը, քանի որ արևմուտքում և արևելքում Հայկական լեռնաշխարհն աստիճանաբար

¹ Ըստ Սեն-Մարտենի Հարավային Կովկաս ասելով պետք է հասկանալ Կուրի արևմտյան ափից՝ Ախալցխայի մոտակայքից մինչև Կուրի արևելյան շրջաններ ընկած աշխարհագրական տարածքը: Տե՛ս, **Saint-Martin J. A.**, *Memoires historiques et geographiques sur l'Armenie*, Suivis du texte Armenien de L'histoire des princes orphelians, t.I, 2012, Nabu Press, p.46:

² Տե՛ս **Гвоздецкий Н. А., Голубчиков Ю. Н.**, *Горы*, Москва, 1987, с. 114:

³ Տե՛ս <https://www.britannica.com/place/Armenian-Highland>. Ըստ Թ. Հակոբյանի այն կազմում է 320000 քառ.կմ: Տե՛ս, **Հակոբյան Թ. Խ., Մելիք-Քախչյան Ստ. Տ., Բարսեղյան Հ. Խ.**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, չորս հատորով, հ.3 (Կ-Ն), Երևան, 1991, էջ 336: Ըստ Ֆ.Ա. Բրոկհաուզի և Ի. Ա. Եֆրոնի՝ 357900 քառ. կմ: Տե՛ս, *Энциклопедический словарь под редакцией проф. И. Е. Андреевского*, том II, издател. Ф.А. Брокгаузъ (Лейпцигъ), И.А. Ефронъ (С.-Петербургъ), С.-Петербургъ, 1890, с. 121: Ըստ Հ. Տևեճյանի այն կազմում է 250000 քառ. կմ.: Տե՛ս Տէվէճեան Հր., Աշխարհագրութիւն Հայաստանի. պատմական Հայաստան, արդի Հայաստան եւ Կիլիկիա, Հալէպ, 1934, էջ 6:

⁴ **Պապէսեան Հ. Գ.**, Աշխարհագրութիւն Հայաստանի, Փարիզ, 1933, էջ 7:

⁵ **Ալիշան Ղ.**, Տեղագիր Հայոց մեծաց, ս. Ղազար, 1855, էջ 7:

փոխակերպվում է Փոքրասիական և Իրանական բարձրավանդակների¹:

Աշխարհագրական առումով Հայկական բարձրավանդակի սահմանները հյուսիս-արևմուտքում հասնում են՝ Սև ծովի հարավային ափագիծ, Արևելա-Պոնտական, Մոսքիկյան (Մեսիսերթական) և Թռեղքի (Թրիալերթի) լեռնաշղթաների հյուսիսային եզերքները, հյուսիսում՝ Կուրի իջույթը, Ռիոնի (Կոլխիդայի) գետահովիտը (վրացական կոշտ), Փոքրկովկասյան լեռների հյուսիսային ծայրաշղթաները, հարավում՝ Մալաթիայի լեռների հարավային ստորոտից մինչև Հայկական Տավարոս և Կորդուքի (Հաքիարի) լեռներ, Միջագետքի դաշտ և Ջագրոսի հյուսիսային հատվածը (մինչև Շինակի լեռնանցք), արևելքում Փոքր Կովկասի համակարգի արևելյան ստորոտները՝ մինչև Կուր-Արաքսյան դաշտավայր (ըստ Պողոմենուսի, Մ. Խորենացու, Կ. Ռիտտերի, Վ. Սիվերսի, Լեոյի՝ Կասպից ծով)², հարավ-արևելքում՝ Ուրմիա լիճ, Նոշիրականի (Միչուդադի=Միշուդադի, Սիահ կուհի) հարավային գագաթներ (Սոհունդ (Մեգիսենդ) և Սավալան հրաբուխների հարավային փեշեր, Թալիշի լեռներ և Կասպից ծով)³, արևմուտքում այն հասնում է մինչև Անտիտավրոս (Մալաթիայի լեռների արևմուտքով)՝ «Անատոլիայի արևելյան պատնեշ»⁴, Թեջերի լեռներ, Ուզունյայլայի բարձրավանդակ, Կապադովկիայի տափաստաններ, Ալիս (Կզըլ-Իրմակ) և Եփրատ գետերի ջրբաժանով դեպի Գայլ գետը և Սև ծով: Աբր.

¹ Տե՛ս Армянское нагорья, Большая советская энциклопедия, т. 3, Москва, 1950, с. 108.

² Կուր-Արաքսյան դաշտավայրի տեղում գտնվող Վանդամյան, կամ Քյուրդամիրյան ցամաքն իջել է, իսկ Փոքր Կովկասյան լեռները բարձրացել են: Տե՛ս, **Գաբրիելյան Հ. Կ.**, Հայկական լեռնաշխարհի, ուսումնական ձեռնարկ, էջ 13:

³ Ըստ Հ. Գաբրիելյանի Սավալան (Սաբալան) և Սոհունդ (Սեխենդ) հրաբուխները Իրանական սարահարթին խորթ են: Սրանք հիմքով կապված են Հայկական հրաբխային օջախի հետ, թե՛ ծագումով, թե՛ բարձրությամբ, և թե՛ մակերևույթով նման են Հայկական հրաբխային բարձրավանդակին, ուստի դրանք պետք է դիտարկել որպես Հայկական լեռնաշխարհի մեկ ամբողջություն: Ուրմիա լճի ավազան-գոգավորությունը ևս ծագումով ու լանդշաֆտներով նմանություն ունի Արաքսի ավազանի կիսաանապատներին, ուստի հարավարևելյան սահմանն անցնում է Արցախի լեռների ստորոտով դեպի Արաքսի աջակողմյան Սև ջուր (Ղարասու) վտակի հովիտը՝ մինչև Սավալան հրաբխի հարավային ստորոտը, այնտեղից՝ Բոզգուշ լեռնաշղթայի հարավային ստորոտով մինչև Ուրմիա (ինում՝ Կապուտան) լճի հարավային ափերը՝ ընդգրկելով Սոհունդ (Սեխենդ) հրաբուխը՝ մինչև Ուրմիայի հարավային ափամերձ գոտի և Ջագրոսյան լեռնաշղթայի Շինակի լեռնանցքը: Տե՛ս, **Գաբրիելյան Հ. Կ.**, Հայկական լեռնաշխարհի, ուսումնական ձեռնարկ, էջ 13-14

⁴ **Սամուելյան Խ.**, Հին Հայաստանի կոլտուրան. պատմական ակնարկներ, առաջին հատոր, քարեդար, Յերևան, 1931, էջ 39:

Ղուկասովն այդ սահմանն անց է կացնում 39-րդ միջօրեականով¹:

Գ. Շիրինյանը ֆիզիկաաշխարհագրական մոդելավորման հիման վրա կատարել է Հայկական լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրական միավորի հետևյալ սահմանագծումը. հյուսիսում՝ Եշիլըրմակ գետաբերանից Սև ծովի ափագծով մինչև Ճորոխի գետաբերանը, Փոքր Կովկասի հյուսիսային և հյուսիս-արևելյան ստորոտները՝ մինչև Կասպից ծով, հարավում՝ Միջագետքի հարթավայրի հյուսիսային եզրով (Արաբական և Եվրասիական քարոլորտային սալերի առճակատման գիծը) մինչև Լևանտինյան բեկվածքագիծ (Պազարջիկի գոգավորությունում), արևելքում՝ Կասպիական ծովածով մինչև Սեֆիդրուդի գետաբերանը և նրա գետահովիտով մինչև նրա ակունքում բարձրացող լեռնահանգույց գագաթը (3173 մ), արևմուտքում՝ Մարաշի գոգահովտով, Ջահան գետով հոսանքն ի վեր՝ հյուսիսից շրջանցելով Բինբոզա և Կիլիկյան Տավրոս լեռնաշղթաները, ապա մտնելով Եշիլըրմակի հովիտ ձգվում մինչև Սև ծով²:

Առանձին դեպքերում, Մեծ Կովկասի հարավային փեշերը, դրան հարող Կոլխիդայի ցածրավայրը, Կուրի իջվածքը, ինչպես նաև Թալիշի լեռները և Լենքորանի ցածրավայրը, որոնք սովորաբար համարվում են որպես Անդրկովկասյան տարածաշրջան, իր տեկտոնական զարգացման և կենսակլիմայական պայմանների առանձնահատկություններով Հայկական լեռնաշխարհի հետ կարելի է դիտարկել որպես աշխարհագրական մեկ ամբողջություն:

Բագրևանդը Հայկական լեռնաշխարհի երկրաչափական կենտրոնն է: Հայկական բարձրավանդակը արևելքից արևմուտք Մուշ քաղաքով անցնող զուգահեռականով ձգվում է 975-1065 կմ երկարությամբ, իսկ հյուսիսից հարավ Թոնդրակ լեռով անցնող միջօրեականով՝ 525-590 կմ լայնությամբ³:

Վարչաքաղաքական առումով հայկական բարձրավանդակի տա-

¹ Տե՛ս **Гукасов А.**, Основные черты строения Армянского нагорья, съ картой, с. 8-9.

² Տե՛ս **Շիրինյան Գ.Թ.**, Հայկական լեռնաշխարհի ֆիզիկաաշխարհագրական սահմանների ճշգրտումը, ՀՀ ԳԱԱ Տեղեկագիր. «Գիտություններ Երկրի մասին», Երևան, 2000թ., թիվ 1-2, էջ 127:

³ Ըստ Բրոկհաուզի այն ունի 975-1050 կմ երկարություն, և 525 կմ լայնություն: Տե՛ս Энциклопедический словарь, Энциклопедический словарь под редакцией проф. И.Е. Андреевского, том II, издател. Ф. А. Брокгауз (Лейпциг), И. А. Ефронь (С. Петербург) с.121:

րածքը հյուսիսում սահմանակից է եղել Վիրքին (Վրաստան), հյուսիս-արևելքում՝ Աղվանքին, հարավ-արևելքում՝ Պարսկաստանին, հարավում՝ Միջագետքին (Մեսոպոտամիա), հարավ-արևմուտքում՝ Ասորիքին (Սիրիա), արևմուտքում՝ սկզբում Խեթական թագավորությանը, հետո Կապադովկիային, ավելի ուշ Բյուզանդիային և Օսմանյան Թուրքիային, հյուսիս-արևմուտքում՝ Պոնտական թագավորությանը:

Ըստ Ղ. Ինճիճյանի սահմանները հյուսիսում հասնում էին մինչև Վիրք, Տրապիզոն և Ամասիա, արևելքում՝ Ատրպատական և Շիրվան, հարավում՝ Ադանա, Հալեպ, Ուրֆա և Մոսուլ, իսկ արևմուտքում՝ Չորում, Չանկրի, Դըրշեհիր¹:

Հայաստանի վարչական սահմանները հաճախակի փոփոխության են ենթարկվել՝ երբեմն ընդգրկելով ամբողջ Հայկական բարձրավանդակը, երբեմն սեղմվելով այդ բարձրավանդակի կենտրոնական մասում:

Հայկական բարձրավանդակը վերը նշված բոլոր երկրներից ավելի բարձրադիր է և կարկառուն: Հայկական բարձրավանդակի միջին բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1850-1900 մ. (ըստ Ն. Վ. Ալեքսանդրովսկայայի՝ 2000մ.²) որը կազմում է տարածքի մոտ 30%-ը, այն դեպքում, երբ Իրանական բարձրավանդակի միջին բարձրությունը կազմում է 1400 մ., Փոքրասիական բարձրավանդակի միջին բարձրությունը՝ 700-1200 մ.³, Անդրկովկասի իջույթի (Կովսիդայի և Կուր-արաքսյան դաշտավայրերը) և Միջագետքի դաշտավայրի միջին բարձրությունը՝ 200 մինչև 800մ.⁴: Այն Առաջավոր Ասիայի ամենաբարձր երկիրն է⁵ և նրա բարձրությունը երբեմն արտահայտվում է լեռնալանջերի ու գագաթների, իսկ երբեմն էլ լեռնադաշտերի ձևով:

Հաշվի առնելով այդ առանձնահատկությունը ավստրիացի երկրա-

¹ Տե՛ս Ինճիճյանի **հ.Ղ. վղա.**, Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ և Ամէրիկոյ, մասն Առաջին, Ասիա, հատոր Ա, Վէնէտիկ, 1806, էջ 14:

² Տե՛ս Физическая география материков и океанов, Н. В. Александровская, Зарубежная Азия, с. 101:

³ Տե՛ս **Матвеев С. Н.**, Турция (Азиатская часть-Анатолия), физико-географическое описание, Москва-Ленинград, 1946, с.24-27.

⁴ Տե՛ս **Гукасов А.**, Основные черты строения Армянского нагорья, съ картой, Тифлиси, 1901, с.10, նաև **Հակոբյան Թ. Խ.**, Հայաստանի պատմական աշխարհագրություն (ուրվագծեր), Երևան, 1968, էջ 8:

⁵ Տե՛ս **Гукасов А.**, Основная черты строения Армянского нагорья, съ картой, с. 10.

բան **Էդուարդ Զյուսը** Հայոց լեռնաշխարհն անվանել է «**Լեռնակղզի**»՝ «**Berginsel**»¹, գերմանացի նշանավոր գիտնական, աշխարհագետ **Կարլ Ռիտտերը** Հայկական բարձրավանդակը կոչել է «**օդով և ջրով հարուստ լեռնային մի զով կղզի**»², **Գևորգ Մեսրոպյն** այն համեմատել է «անհուն տարածութեամբ բերդաքաղաք»-ի հետ, որը «**շրջապատուած է առաւել կամ նուազ բարձրութեամբ պարիսպներով**», և ունի «**հսկայ միջնաբերդ**»³, Ա. Ահարոնյանն այն կոչել է «**Հայկական ամրութիւն**», «**վիթխարի պուլվար**», իսկ ռուս աշխարհագետ **Վ. Գուրկո-Կրյաժինն** այն համարել է «**բնական հսկայական մի միջնաբերդ**», «**բնական ամրոց**», որը վերահսկում է շրջակայքի տարածքների վրա⁴:

Հայկական բարձրավանդակը լեռնային երկիր է (լեռները կազմում են տարածքի մոտ 85%-ը), որի տեկտոնական բարձրացումները տարեկան կազմում են 5-10 մմ. (100 հազ. տարում այն կկազմի 500-1000 մ.): Լեռնաշխարհի ամենաբարձր լեռնագագաթը Մեծ Մասիսն է, որի բարձրությունը ծովի մակերևույթից՝ 5165 մ. է: Ամենացածր կետերը՝ Դեբեդի հովիտը և Մեղրու կիրճն են, որտեղ բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է ընդամենը 390 մ.⁵: Ծայրագույն ցածր կետը Սև ծովի ափամերձ հատվածն է՝ 0 մ. բարձրությամբ: Հարաբերական բարձրությունը ներքին շրջաններում հասնում է 3000-4000 մ.-ի (Մասիս՝ 4300 մ., Քաջքար՝ 3937 մ., Սիփան՝ 3700 մ., Զիլո՝ 3000 մ.): Հայկական լեռնաշխարհը Միջերկրական ծովից հեռու է 195, Կասպից ծովից 80, Պարսից ծոցից 1000 կմ⁶:

Հայկական լեռնաշխարհի կենտրոնական մասը զբաղեցնում են բարձրավանդակները, որոնցից խոշորը Հայկական հրաբխային բարձրավանդակն է (100 հազ. քառ. կմ տարածքով): Այն Առաջավոր Ասիայի երեք լեռնահանգույցներից (Պամիր, Հայկական հրաբխային բարձրավանդակ

¹ **Հ. Կ. Գաբրիելյան**, Հայկական լեռնաշխարհ, ուսումնական ձեռնարկ, էջ 16:

² **Риттер К.**, Землеведение Азии, Санкт-Петербургъ, 1856, с. 83.

³ **Մեսրոպ Գէորգ**, Հայաստան, աշխարհագրական, պատմական, ցեղագրական, վիճակագրական եւ մշակութային տեսակետներով, Կ.Պոլիս, 1919, էջ 2:

⁴ Տե՛ս **Гурко-Кряжин В.**, Прошлое и настоящее советской Армении, «Новый Восток», Москва, 1927, кн. 16-17, с. 208.

⁵ Տե՛ս Հայկական սովետական սոցիալիստական ռեսպուբլիկայի Ատլաս, Երևան-Մոսկվա, 1961, էջ V:

⁶ Տե՛ս **Հ.Կ. Գաբրիելյան**, Հայկական լեռնաշխարհ, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2000, էջ 10:

և Արևմտյան Փոքր Ասիա) մեկն է¹, որի մակերևույթի գերիշխող ձևը սարահարթերն են և դրանց վրա բարձրացող հրաբխային լեռնապարերը²:

Հայկական հրաբխային բարձրավանդակը երկրաբանական առումով բաժանվում է երեք շրջանների. 1. Հյուսիսային՝ Գուգարքի բարձրավանդակ, որն ընդգրկում է Արսիան-Թրիալեթի և Փոքրկովկասյան լեռների միջև ընկած տարածքը և կոչվում է **բնալեռնային** գոտի: 2. Կենտրոնական շրջան, որն ընդգրկում է Փոքրկովկասյան լեռների և Հայկական պարի միջև ընկած տարածքը, և կոչվում է **խճեղեն** գոտի: 3. Հարավային շրջան, որն ընդգրկում է Հայկական պարի և Հայկական Տավրոսի միջև ընկած տարածքը³ և հայտնի է **հեղեղաբեր** հողերի գոտի անունով⁴:

Պատմաաշխարհագրական առումով լեռնաշխարհը բաժանվում է երկու գոտիների. 1. Կենտրոնական շրջան՝ Կենտրոնական հրաբխային բարձրավանդակ, կամ Միջնաշխարհ, որը հիմնականում կազմված է երիտասարդ ու չնեոթետիսյան հրաբխային ապարներից և, որն իրենից ներկայացնում է հրաբխային սարահարթերի և գոգավորությունների մի բարձրավանդակ (Չավախքի, Կարսի, Բյուրակնի, Գեղամա, Վարդենիսի, Սյունիքի): 2. Ծայրաշրջանի տարածք, որն իրենից ներկայացնում է հրաբխային ծալքավոր լեռնաշղթաների մի ամբողջություն:

Հայկական բարձրավանդակի տարածքի մեծ մասն այսօր գտնվում է Թուրքիայի, իսկ առանձին հատվածներ՝ Հայաստանի, Արցախի, Վրաստանի, Իրանի Իսլամական և Ադրբեջանի Հանրապետությունների կազմի մեջ:

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է Հայկական բարձրավանդակի հյուսիսարևելյան մասում և կազմում է Հայկական բարձրավանդակի ողջ տարածքի 1/14 մասը: Ունենալով 350 կմ երկարություն և 150 կմ լայնություն⁵, այն Սև ծովից ուղիղ գծով (Ախուրյանից) հեռու է 163, Կասպից ծովից (Չանգեզուրից)՝ 193, Միջերկրական ծովից՝ 750, Պարսից ծոցից՝ 1000 կմ⁶:

¹ Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ.6, Երևան, 1980, էջ 178, 187:

² Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ.1, Երևան, 1971, էջ 8:

³ Տե՛ս **Бальян С.П.**, Структурная геоморфология Армянского нагорья и окаймляющих областей, с. 17-19:

⁴ Տե՛ս **Առաքելյան Հ.**, Հանրագիտական բառարան, հ. I, էջ 1434:

⁵ Տե՛ս **Պաֆֆենհոլց Կ.Ն.**, Հայաստանի և Փոքր Կովկասի նրան կից մասերի գեոլոգիական ակնարկը, Երևան, 1946, էջ 9:

⁶ Տե՛ս **Ավագյան Գ.**, Հայաստանը և հայերս աշխարհում, Երևան, 1992, էջ 8-9:

Հայկական բարձրավանդակը հայ ժողովրդի բնօրրանն է, որի հետ են կապված հայ ժողովրդի պատմական անցյալի հիմնական դրվագները: Հայկական բարձրավանդակը առաջավորասիական արմենոիդ մարդաբանական տեսակի, հնդեվրոպական լեզուների տրոհման և մարդկային քաղաքակրթության հնագույն օջախներից է: Այստեղից է կատարվել հնդարիական ժողովուրդների ցրումը դեպի Եվրոպա և Ասիա: Նրա տարածքը հանդիսանում է երկրագործության ծագման, բույսերի աճեցման, մետաղամշակության զարգացման, ձիաբուծության և աստղագիտության հնագույն կենտրոններից մեկը:

Հայկական բարձրավանդակի աշխարհագրական դիրքն իր ազդեցությունն է թողել հայ ժողովրդի ազգային հոգեբանության, բնավորության և քաղաքակրթության պատմության վրա¹: Այդ առիթով Խ. Սամվելյանը նկատում է. «Բնական միջավայրն է պայմանավորում տվյալ ժողովրդի արտադրողական ուժերի բնույթն և զարգացումը, նրա տնտեսական գործունեության ամբողջ էությունը»²:

Մի կողմից այն նպաստել է հայկական զանազան ցեղերի միանալուն և մեկ ազգ կազմելուն, մյուս կողմից, ազգը բաժանել է զանազան հատվածների և հիմք դարձել Հայաստանի քաղաքական կյանքի հեղիեղուկ վիճակին, մանր իշխանությունների, անմիաբանության առաջացմանն ու խանգարել միասնական կենտրոնաձիգ ուժեղ պետության ստեղծմանը: Անմատչելի լեռներով պատսպարված գավառատեր նախարարներն ավելի քիչ են հակում ցուցաբերել ենթարկվելու կենտրոնական իշխանությանը: Կենտրոնախույս ուժերի առկայությունն էլ իր անցանկալի ազդեցությունն է թողել կենտրոնաձիգ պետության ստեղծման գործում, իսկ ուժեղ պետության բացակայությունն էլ իր հերթին բացասաբար է անդրադարձել երկրի պաշտպանունակության վրա և դուռ բացել արտաքին թշնամիների առջև:

¹ Չպետք է գերազնահատել աշխարհագրական միջավայրի դերը հասարակության զարգացման գործում, որը հայտնի է «աշխարհագրական դետերմինիզմ» անունով: Եթե մարդկության պատմության վաղ շրջանում աշխարհագրական գործոնն ունեցել է բացառիկ կարևոր նշանակություն, ապա հետագայում՝ գիտության և տեխնիկայի բուռն զարգացման պայմաններում, դրա ազդեցությունը հետզհետե նվազել է, քանի որ մարդը վերափոխվելով, փոփոխել է նաև իրեն շրջապատող աշխարհագրական միջավայրը:

² **Սամուելյան Խ.**, Հին Հայաստանի կուլտուրան-պատմական ակնարկներ, առաջին հատոր, քարեդար, էջ 39:

Այդուհանդերձ, Հայկական լեռնաշխարհը, ինչպես Դ. Բաբայանն է նկատում «... մինչ օրս հանդիսանում է ոգեշնչման աղբյուր, որը մշտապես հոգևոր ուժեր է սնուցում հայությանը, ինչն արդեն հարյուրամյակներ ի վեր մեր ժողովրդին թույլ է տալիս գոյատևել այսքան բարդ շրջապատում, հաղթահարել անհաղթահարելի թվացող խոչընդոտները: Էներգիայի այդպիսի աղբյուրը ոչ ներդաշնակ շահամիտումներ է առաջ բերում հայ ժողովրդի մոտ, առանց որի պարզապես անհնար է հավասարակշռություն պահպանել... առավել ուժեղ հարևանների հետ...»¹:

Այսպիսով, Հայկական բարձրավանդակի պատմաաշխարհագրական կարևոր առանձնահատկություններն են՝ ա) Հայկական բարձրավանդակն իրենից ներկայացնում է գրանիտային մի լեռնակուտակ, բ) նրա մակերևույթի վրա առկա է հրաբխային գործունեության բավականին մեծ ազդեցություն, որի արդյունքում այն դարձել է հրաբխային լավայի միջոցով առաջացած առաջավորասիական ամենամեծ բարձրավանդակը, գ) ի հաշիվ բազմաթիվ ծալքերի և ներքին լեռնաշղթաների, այն ունի ավելի հարուստ և առանձնահատուկ ռելիեֆ, քան հարևան տարածաշրջանները, դ) այն մի լեռնաշխարհ է, որի կենտրոնական մասն ավելի բարձր է, իսկ դեպի զանազան կողմեր գնալով՝ ցածրանում է աստիճան առ աստիճան և իջնում սանդուղքաձև, ե) այն ունի բավականին ընդգծված բացարձակ բարձրություն, որով իրավամբ համարվում է առաջավորասիական ամենաբարձրադիր երկիրը, զ) այն հարուստ է գետերով ու ջրերով և է) աչքի է ընկնում Միջերկրական ծովի ազդեցության որոշակի թուլացմամբ:

Քանայի բառեր – Հայկական լեռնաշխարհ, Լեռնակուտակ, Հ Աբիխ, Կ. Ռիպրտեր, արևելյան Անատոլիա, աշխարհագրական սահմաններ, երկրաբանական անցյալ, արաբական կոշտ, Ռուայեր, Արևելք:

¹ **Բաբայան Դ.**, Հայկական լեռնաշխարհի տեղն ու դերը Աստվածաշնչյան աշխարհաբաղաբականության մեջ, Երևան, 2005, էջ 36:

ИСТОРИКО-ГЕОГРАФИЧЕСКИЕ И ИСТОРИКО-ПОЛИТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ АРМЯНСКОГО НАГОРЬЯ, КАК БИБЛЕЙСКОГО ВОСТОКА

Аветис Арутюнян, Аршак Балян

Ключевые слова — Армянское нагорье, горный массив, Г. Абих, К. Риттер, Восточная Анатолия, географические границы, геологическое прошлое, Аравийская платформа, Руайер, Восток.

Библейский Восток — армянское отечество, является историко-географическим регионом, на границах которого с конца IV-го и с начала III тыс. зародился и укоренился армянский народ и создал армянскую государственность. Существует изначальное историческое название — Айк, Айоц Ашхар, Армянский дом или Армения. Аналогичным образом, она имеет свою географическую формулировку, известную как Армянское нагорье.

Армянское нагорье, расположенное в северо-западной части Западной Азии, появилось десятки и сотни миллионов лет назад. Это земля, появившаяся в результате вулканических, горных и тектонических сил, своеобразный гранитный холм. Все Армянское плато составляет около 400 000 кв. км. Это самое большое и высокое вулканическое нагорье в Передней Азии.

Историко-географические особенности Армянского нагорья: отличительная рельефность, большое влияние вулканической активности на ее поверхность, достаточно выраженная абсолютная высота, изобилие рек и вод.

Армянское плато - колыбель армянского народа, одно из старейших мест в антропологии древних азиатских арменидов, центр раскола индоевропейских языков и человеческой цивилизации. Его территория является одним из старейших центров в области сельского хозяйства, растениеводства, металлургии, коневодства и астрономии. Географическое положение Армянского нагорья повлияло на историю национальной психологии, характера и цивилизации армянского народа.

Учитывая особенности Армянского нагорья, выдающийся немецкий геолог Герман Абих назвал Армянское нагорье как «Армянским высокогорьем», Раймонд Фьюрон назвал его «Армянской пологой горной грядой», австрийский геолог Эдуард Зюс назвал Армянское нагорье «горным островом», а немецкий географ Карл Риттер назвал его «прохладным горным островом, богатым воздухом и водой».

HISTORICAL-GEOGRAPHICAL AND HISTORICAL-POLITICAL PECULIARITIES OF THE ARMENIAN HIGHLAND AS A BIBLICAL EAST

Avetis Harutyunyan, Arshak Balyan

Keywords - *Armenian Highland, Mountain chain, H. ABIKH, K. Ritter, Eastern Anatolia, Geoborbers/geographical borders, Geological past, Arabic tough, Ruayer, East.*

The Biblical East - the Armenian world, is a historical-geographical region, on the borders of which from the end of the 4th and beginning of the 3rd millennium the Armenian people originated, took root and created the Armenian statehood. There is the original historical name - Hayk, Hayots Ashkhar (The World of Armenia), Armenian House or Armenia. Similarly, it has its own geographical formulation, known as the Armenian Plateau.

The Armenian plateau, located in the northwestern part of Western Asia, appeared tens and hundreds of millions of years ago. This is the land that appeared as a result of volcanic, mountainous and tectonic forces, a kind of granite hill. The whole Armenian plateau is about 400,000 square km. This is the largest and highest volcanic plateau in Western Asia. Historical and geographical features of the Armenian plateau are a distinctive relief, a large influence of volcanic activity on its surface, a rather pronounced absolute height, an abundance of rivers and waters.

The Armenian Plateau is the cradle of the Armenian people, one of the oldest places in the anthropology of ancient Asiatic Armenoids, the center of the split of Indo-European languages and human civilization. Its territory is one of the oldest centers in the field of agriculture, plant growing, metallurgy, horse breeding and astronomy. The geographical position of the Armenian plateau influenced the history of the national psychology, character and civilization of the Armenian people.

Considering the peculiarities of the Armenian Plateau the prominent German geologist Herman Abikh called the Armenian Plateau as the "Armenian Highland", Raymond Fyuron called it the "Armenian sloping mountain range", the Austrian geologist Edward Zyus called the Armenian Highland "mountain island", and the German geographer Karl Ritter called it "a cool mountain island, rich in air and water".